ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2021 թվականի N 357-Ա

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հուլիսի 15-ի N 249-Ա որոշումը և *Վ. Վարդանյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Վաչիկ Վարդանյանին*** տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 27 աշխատանքային օր, 2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ:

2. ***Վաչիկ Վարդանյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Վարդան Մելիքյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 30
ք. Հրազդան